

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2013թ. մայիսի 12-16-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը մասնակցել է ք. Բուդվայում ( Մոնտենեգրո) կայացած Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի երկրների համար ագրոէկոլոգիայի վիճակագրության կարողությունների զարգացմանը նպատակաուղղված սեմինարին,
- ✓ 2013թ. մայիսի 13-16-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Ալմաթիում (Ղազախստան) կայացած Հումանիտար ճգնաժամի իրավիճակում տվյալների հավաքագրման և վերլուծության հարցերով տեղեկատվության կառավարման և ղեկավարման գծով տարածաշրջանային սեմինարին,
- ✓ 2013թ. մայիսի 20-24-ը ՀՀ ՎՊԽ անդամ Լ. Պետրոսյանը մասնակցել է ք. Վիեննայում ( Ավստրիա) կայացած «Կառավարության ֆինանսների և ազգային հաշիվների վիճակագրության փոխկապակցվածությունը» խորագրով սեմինարին,
- ✓ 2013թ. մայիսի 23-24-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Ռուսաստանի վիճակագրության արդիականացման 20 տարին. Փորձը և հեռանկարները» խորագրով միջազգային գիտական-գործնական կոնֆերանսին,
- ✓ 2013թ. մայիսի 27-29-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Բեռլինում (Գերմանիա) կայացած «Կոմունիկացիաները վիճակագրությունում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2013թ. հունիսի 3-7ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Բուդապեշտում (Հունգարիա) կայացած «Պարենային ապահովվածության վերլուծությունը տնային տնտեսությունների հետազոտության միջոցով հավաքագրված պարենի սպառման վերաբերյալ տվյալների հիման վրա» խորագրով տարածաշրջանային սեմինարին,
- ✓ 2012թ. հունիսի 3-6-ը ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել է ք.Թուրինում (Իտալիա) կայացած «Դեվինֆո 7-ի օգտագործում» խորագրով դասընթացին,

- ✓ 2013թ. հունիսի 12-13-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Ռիո+20-ին հետամուտ լինելը. Կայուն զարգացման գնահատումը և շրջակա միջավայրի և տնտեսական հաշիվների համակարգի իրականացում» խորագրով բարձր մակարդակի սեմինարին,
- ✓ 2013թ. հունիսի 13-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը մասնակցել է ք. Ֆրանկֆուրտում (Գերմանիա) կայացած Մարդկային կայուն զարգացման գնահատման հարցերին նվիրված սեմինարին,
- ✓ 2013թ. հունիսի 16-21-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Եղիազարյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը մասնակցել են ք. Քյոլնում (Գերմանիա) կայացած «Որակի կառավարումը վիճակագրական գործակալություններում» խորագրով ուսումնական դասընթացին,
- ✓ 2013թ. հունիսի 18-21-ը ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած Միջազգային գլոբալ համադրումների շրջանակում ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների ծրագրով իրականացված աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը,
- ✓ 2013թ. հունիսի 24-27-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Ալուշտայում (Ուկրաինա) կայացած «Գլոբալ գնահատում և փորձագետների գնահատում. Հետամուտ լինելը և հետագա քայլերը» խորագրով սեմինարին: